

և Լաւնայուրկի զբաւթիւնքն Գերմանիոյ կը մնային իրաւամբ, և Շելզվիկի ժողովուրդն կ'որոշէր քուէարկութեամբ թէ որ ազգութեան կ'ուզէ վերարբերիլ, գերմանականին թէ սկանտինաւեանին: Եւուզլանտ և շրջակայ կղզիք միութեան դաշն մը կը գնէին Շուեստի հետ՝ նման Նորվեկիոյ, և ասով կ'ազատէինք 1864ին պատերազմէն և իր ազետալի հետեւանքներէն. այս միութեանն նոյն իսկ պատերազմին ժամանակ իրենի էր: Լոնտոնայի Գեսպանաժողովոյն մէջ Կարոլոս Ժե սկիզբ տուաւ այս միութեան. կը պատրաստուէր՝ թէ որ ընդունուէին իր առաջարկութիւնքը՝ բողոքել ամենայն զօրութեամբ և հնարիւք Շելզվիկի Գանեսաց մասին Գերմանիոյ անցնելուն վերայ, ջանալով միացնել զայն դարձեալ Տանիմարքայի հետ: Եպիսկոպոսն Մոնրատ, զլուխ Պաշտօնարանին Գանեսաց, պատասխանեց որ՝ « Էլիսիակողման քաղաքական միութիւնն երայխաւորութիւն մը պիտի ըլլայ Տանիմարքայի ստանալու և զբաւթիւնքը » — Կարոլոս Ժե սկիզբեց Աւստրիոյ ու Ռուսիոյ հետ պատերազմ բանալու գաղափարը էլյտէրի գիծը ստանալու համար, և իրաւունք ունէր, զոր ապացուցին ապա 1866 և 1870 ամաց դէպքերն: Ռուսիա ու Գերմանիա՝ Պալզիկ ծովու մէջ զիրար գերազանցելու ջանքն արդէն իսկ յայտնած են. Տանիկի նախանձաւոր է Լիէպաւի և Քրոնշտադ՝ Քիէլի: Ուրեմն կը կատարածուի կամ պատերազմ և կամ համաձայնութիւն: Պալզիկ ծովուն տիրապետութեան համար եթէ կռիւ մը ծագի Ռուսիոյ և Գերմանիոյ մէջ, աղիտարբեր կ'ըլլայ երկու տէրութեանց ալ: Համաձայնութեան միջոց մը կայ. գրաւուին Եւուզլանտի 'ի Գերմանիոյ, և սկանտինաւեան թերակղզոյն 'ի Ռուսիոյ: Բայց սկանտինաւեան ազգաց միութիւնն իրարու մէջ կըրնայ արդեօք այսպիսի խորհրդոյ մը առջին անտու. և հակառակաւ, եթէ ըլլայ միութիւն կրնայ արդեօք Տանիմարքա սպրնցընել ինքն զինքը գերմանական զօրութեանէն, և Շուեստ հաստատուն կենալ պատերազմի մը հետեւանաց դէմ՝ ընդ մէջ Ռուսիոյ և Գերմանիոյ: Գաղտնիք ապագային:


Մեր ժամանակաց եւրոպական քաղաքագիտաց մէջ կորչաքոֆ իշխանն արժանապէս մեծ անուն ունի. որոյ վրայ արդէն առիթ ունեցանք խօսելու Բազմավիպիս մէջ՝, գրելով ընդարձակ օրէն իր կենսագրութիւնը. ուստի աւելորդ կը համարինք կրկնել նոյն բաները: Բայց հօս իր դէմքն ներկայացուցած ատեննիս, բարեսպաստէ հառիթ մը կը գատենք երկու խօսք զրուցել երեւելի քաղաքագիտին վերջին զործոց վրայ, որոց մէջ ամենէն զխաւորն Պրիւքսելի դեսպանաժողովն է:

Ռուսիա, ինչպէս բազում առթից մէջ տեսնուած է, չէ բարեկամ պատերազմի, և ջանացած է միշտ 'ի նոյն յորդորել նաև ուրիշ տէրութիւնները: Եւրոպա թէպէտ արտաքուստ հանգարտ՝ բայց 'ի ներքուստ յուզեալ վիճակի մէջ է. ուստի Ռուսիա զատյաճ դատեց ժամանակը, և մտածեց ժողով մը գումարել, և զանազան պայմաններով՝ թէ և ոչ բառնալ, այլ գէթ նուազել պատերազմի աղէտքը: Տարույս առաջին կիսուն՝ Ռուսիոյ կայսերութեան Ատենադպիրն կորչաքով՝ շրջաբերական մը հանեց առ ամենայն Տէրութիւնս, հրաւիրելով զամենեսին օրինաւորապէս՝ առաջիկայ գտնուիլ ներկայացուցչի ձեռքով 'ի ժողովն Պրիւքսելի, որ պիտի գումարուէր խորհելու պատերազմի վրայ: — Տէրութիւնք կորչաքով իշխանին այս խաղաղամիտ հրաւերքն ընդունելով, որոշեալ ժամանակին իրենց երեսփոխաններն զրկեցին 'ի Պրիւքսելի: Ինչիրն զժուարալուծելի էր, ուստի բազմադիմի հակառակութեանց ենթակայ եղաւ յիւրաքանչիւր ազգաց, ինչպէս որ կը գուշակուէր յառաջագոյն: Ռուսիոյ ներկայացուցչին որ նախագահ բազմեր էր ժողովոյն, ամենայնփոյթ տարաւ հասնելու աշխարհ

օգուտ նպատակին, բայց քիչ արդիւնք ունեցաւ :

Սպանիա երկար ժամանակէ 'ի վեր կը յուզէր ներքին երկպառակութեամբ, առ որ միւս տէրութիւնք անտարբեր աչօք կը նայէին : Գերմանիա վերջա-

պականութիւն կը գնէր 'ի Սպանիա՝ հրացանի բռնելով զգերին և զանմեղն՝ զօտարն և զանձանօթն, այրելով և կործանելով զէնս, զտունս և զքաղաքս : Տէրութիւնք հաճեցան մէկէն Գերմանիոյ առաջարկութեանը, և զըր-



ԱԼԵԿՍԱՆԴՐ ԿՈՐՉԱԲՈՎ

պէս 'ի գութ շարժելով, կամ հաւանաբար չահու դուռ մը տեսնալով՝ մէջ կը նետուի և կ'առաջարկէ տէրութեանց ընդունիլ Սերրանոյի հասարակապետական կառավարութիւնը, որով հարուած մը տալ Տոն կարողութիւն, որ բարբարոսաբար զամենայն ինչ յաւեր և յա-

կեցին իրարու ետեւէն իրենց դեսպանները՝ ընծայական գրերով : Կորչաքով միայն չեղեցաւ ասոնց կարգէն, չուզելով ճանչնալ Սերրանոյի կառավարութիւնը, իբրև անհաստատ և ոչ ազգային ընդհանուր հաւանութեան գործ : Իրաւունք ունէր նա. վասն զի միւս տէ-

### Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Իր ներքին և արտաքին դժոռարու-  
քիսնները

բութեանց այնչափ պատրաստականու-  
թիւնն ուրիշ վախճան չունէր, բայց ե-  
թէ չահագոյտութիւն կամ մարդահա-  
ճութիւն. և Սպանիա լուսագոյն վիճակ  
մը չառաւ ինչպէս կը յուսացուէր :

Կորչաբով իլիսանին համար մտա-  
ծութեան նիւթ է նաև Տանիմարքայի  
ու Գերմանիոյ մէջ յուզեալ խնդիրը,  
բայց կը յուսանք որ ճարտարամտու-  
թեամբ կը գործէ և յայնմ, գիտելով  
միշտ իր հայրենեաց օգուտը: Վերջերս  
ուղևորութեան ելաւ զանազան կող-  
մեր, և ով գիտէ թէ ինչպիսի քաղա-  
քական նպատակ մ'ունէր մտացը մէջ:

Ռուսիա խաղաղասէր է միշտ, և  
Եւրոպիոյ այս անհաստատ վիճակին  
մէջ անգամ ինքն զինքն ոչ յայս և ոչ  
յայն կողմն կը ցուցնէ, լաւ գիտելով  
որ իրեն այս կամ այն կողման միտու-  
մը՝ որոշիչ է առաւելութեան: Թէ որ  
Գերմանիոյ կողմը հակամիտի յայտնա-  
պէս, նա անտարակոյս մէկէն նոր  
կռիւ մ'ալ կը բանայ Գաղղիոյ դէմ՝ ա-  
զատելու անստուգութեան վիճակէն.  
Իսկ թէ որ Գաղղիոյ կողմը հակի, ան-  
շուշտ մէկէն պատերազմի ձեռք կը  
զարնէ ընդդէմ Գերմանիոյ, վրէժ խն-  
դրելու իր պատուոյն և զինուցը: Իսկ  
եթէ կորչաբով արևելեան խնդիրը ար-  
ծարծելու յարմար առիթն եկած հա-  
մարի, գժուարին կ'ըլլայ արգելուլ զին-  
քը: Ռւրեմն Ռուսիա Եւրոպիոյ խաղա-  
ղութեան նեցուկն է, տէր է Եւրոպիոյ  
բախտին. ինչպիսի փոփոխութիւն:

Կորչաբովի քաղաքագիտութիւնն  
ընդարձակ ու բազմատեսակ է՝ նման  
այն աշխարհին զոր կը ներկայացնէ:  
Սա Ալեքսանդրի վստահութեան հա-  
մեմատ զօրաւոր գործի մ'եղաւ մեծա-  
մեծ բարեկարգութեանց, վերանորո-  
գելով Ռուսիոյ կայսրութիւնը յետ  
1855ի պատերազմին: Թէ և հիմա եօ-  
թանասուն և վեցամեայ է, այլ անկո-  
րուստ պահած է մտաց կորովութիւնը  
և անխոնջ գործունէութիւնը:

Թուի թէ Գերմանիա ներքսպայէս ինքն  
զինքը կարգաւորելու զբաղած է հիմա.  
բայց մտցած չէ նաև արտաքինը: Ժամա-  
նակ մ'եղած չէ թերևս՝ որ Եւրոպա իր  
քաղաքական հորիզոնը այսչափ պղտոր ու  
խռովեալ տեսած ըլլայ: Եւրոպիոյ մէջ կայ  
մաս մի աշխարհաց որ տակաւին անկեր-  
պարան վիճակի մէջ են. կան սողու-  
թիւնք՝ որ կը ծփին իրարմէ նուաճելաբ-  
անկարելի կ'երևայ որ տեւէ ընդերկար Ի-  
րաց այս անորոշ վիճակը: Մինչդեռ ՚ի Հիւ-  
սիս Սլաւեանց գլխաւոր մասն ունի մեծա-  
զօր կայսերութիւն, ուրիշ կողմ նոյնացեղ  
ժողովուրդք՝ ինչպէս են Խուսարք, Սիլա-  
ւոնք, Չէքք, Լեհացիք և Հուրգանք՝ կը  
հպատակին օտար տէրութեան: Ռուսիա  
իրև բնական պաշտպան համարուած է  
սլաւ ժողովուրդեան, և գուցէ օր մը նոյն  
տիտղոսով միջամուխ պիտի ըլլայ Աւստրիոյ  
գործոց մէջ, որ կը տեսնայ վտանգը յայտ-  
նապէս և չունի հնարը զերծանելու ան-  
կէց: — Եոյն իսկ Գերմանիոյ կայսրութիւ-  
նը դժուարին գրից մէջ կը գտնուի յան-  
կարծական բարձրանալուն հետևանք: Կը  
տեսնայ միշտ Գաղղիոյ մախանքն, Ռու-  
սիոյ նախանձն և Աւստրիոյ անվստահու-  
թիւնը:

Պ. Պիզմարք գիտէ այս ամեն բաները և  
կը մտածէ հաստատութեամբ: Գերմանիոյ  
վտանգն երեք թշնամի տէրութեանց դաշ-  
նակցութենէն կրնայ ծնանիլ, իւրարան-  
չիւրն իրեն առանձին շահերը գիտելով:  
Ի՛նչպէս ազատելու է այս վտանգէն: Երկու  
միջոց կայ. Թշնամեաց Գերմանիոյ դէմ  
գործելու կամ կամբը պէտք է բաժնայ և  
կամ կարողութիւնը: Ռուսիոյ և Գերմա-  
նիոյ կայսերաց այժմեան մտերմութիւնը  
անխարդախ թուի, անանկ որ Ռուսոյ չի  
կրնար առ ժամս դաշնակցիլ Գաղղիոյ և  
Աւստրիոյ հետ ընդդէմ Գերմանիոյ. բայց  
այս երաշխարուութիւնն, ինչպիսի զօրու-  
թիւն այ ունենայ, ապագային առջին նշա-  
նակութիւն չունի: Միթէ խոհեմութիւն է  
սպասել որ Գաղղիա բժշկէ իր վէրքերը:  
Անշուշտ ոչ: Ռւրեմն բրուսական զինուց  
յաջողութեան արդիւնքն եղաւ անստու-  
գութիւն և խաղաղութիւն անհաստատ:  
Պ. Պիզմարք հինգ միլիարտ տուգանք դը-